



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

_____ N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ գորակոչիկներ,

Ահա մեկնարկել է 2019 թ. ամառային գորակոչը:

Մա նշանակում է, որ ձեր կյանքում սկսվում է մի նոր փուլ, որն, անշուշտ, լի է լինելու բազմաթիվ ձեռքբերումներով ու նաև փորձություններով: Բայց, հիշե՛ք, որ ցանկացած հաղթահարված փորձություն հանդիսանում է մի նոր գրանցած հաջողություն:

Թո՛ղ որ, Հայոց Բանակում ձեր ծառայությունն անցնի խաղաղ ու անվրդով, թո՛ղ որ ձեր ծնողները, քույրերն ու եղբայրները, միմիայն հպարտության զգացումով լցվեն, իսկ ձեր վերադարձը դառնա իսկական տոն:

Ձեր ծառայության օրերը լցրեք այն պարզ գիտակցումով, որ ապրում եք այլևս Նոր Հայաստանում, որտեղ կա օրենքի գերակայություն, իրավահավասարություն, սեր և համերաշխություն, և որ ձեր թիկունքին կանգնած է մի պետություն, որն հետայսու, հոգ է տանելու իր յուրաքանչյուր հայորդու համար:

Շնորհավո՛ր և բարի ծառայություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՛

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ